ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Ուկրաինայի և Հյուսիսային Կովկասի Առաջնորդական փոխանորդությունների համայնքային մարմինների դիմումներին, սույն թվականի հունվարի 10-13-ը կայացած Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստից հետո ստորագրեց երկու կոնդակ՝ հիշյալ երկու փոխանորդությունները ինքնուրույն թեմեր դառնալու մասին:

Նորին Սրբության տնօրինությամբ Ուկրաինայի թեմական առաջնորդ է նշանակվել Տ. Նաթան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանը, իսկ Հարավային Ռուսաստանի (Հյուսիսային Կովկասի շրջան) թեմական առաջնորդ՝ Տ. Եզնիկ ծայրագույն վարդապետ Պետրոսյանը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ